ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Մեր Համալսարանը հնի և նորի համալիր գաղափարակիրն է

ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ԻՐ ՆՈՐԱԿՈՉԻԿ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

Մեր համալսարանը ջերմությամբ և հատուկ ուշադրությամբ է յուրաքանչյուր նոր ուսումնական տարի դիմավորում նորեկներին: Այս տարի նույնպես՝ Ուսանողական խորհուրդը կազմակերպել էր առաջին կուրսեցիների իրազեկման միջոցառում:

Ուսանողական խորհրդի ղեկավարությունը՝ ի դեմս փոխնախագահ Արմեն Հարությունյանի, համալսարանի բակում ողջունեց և շնորհավորեց առաջին կուրսի ուսանողներին՝ Գիտելիքի օրվա կապակցությամբ՝ մաղթելով նրանց կանաչ ճանապարհ և ձեռքբերումներով լի ուսումնական տարի:

Այնուհետև Ուսանողական խորհրդի ներկայացուցիչներն առաջին կուրսի ուսանողների հետ շրջայց կատարեցին համալսարանում, ծանոթացան համալսարանի կառուցվածքին, ուսումնական գործընթացի կազմակերպմանը, ինչպես նաև ուսանողներին ծանոթացրեցին իրենց իրավունքներին և պարտականություններին:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՔՈԼԵՋԸ 100 ՏԱՐԵԿԱՆ Է

«Ոսկե ձեռքերի» դարբնոցը. շինարարական քոլեջի տասնյակ հազարավոր շրջանա-վարտների մեծ մասը կյանք է մտել շինարարի կոչումով

Գրեթե 100 տարի է անցել այն օրից, երբ սկսեց գործել Ֆիրդուսու փողոցի N 49 հասցեում գտնվող երկու սենյականոց փոքրիկ տանը պատսպարված հաստատությունը, որն ուներ ընդամենը 37 սան:

Այսօր պատկերն այլ է, Նոր Նորքի 5-րդ զանգվածում հանգրվանած նախկին՝ Ա. Թամանյանի անվան շինարարական տեխնիկումը (այսօր՝ ՃԾՀԱՀ-ի միջին մասնագիտական շինարարական քոլեջը) իր լավագույն տարիներին ունեցել է մինչև 1700-2000 սովորող:

Շինարարական տեխնիկումի շրջանավարտներ են՝ ճարտարապետ Սամվել Սաֆարյանը, ակադեմիկոս Նագուշ Հարությունյանը, պրոֆեսոր Վարազդատ Հարությունյանը, պրոֆեսոր Արտաշես Մամիջանյանը, ճարտարապետ Ալեքսանդր և գրող Անահիտ Սահինյանները, ԵՃԾՊՀ ամբիոնի վարիչ Պետրոս Տեր-Պետրոսյանը, «Երևանշին» ընկերության ղեկավար Վազգեն Պողոսյանը. . .

90-ականներին վճռավի համակարգի անցումն ու մասնավոր բուհերի աճը միջին մասնագիտական հաստատություններին ցայտնոտի մեջ գցեց: Շատերն այդպես էլ չկարողացան շտկել մեջքը:

Շինարարական տեխնիկումն էլ հայտնվեց դժվարին դրության մեջ՝ չկարողանալով պատրաստել շինարար-վարպետներին բավարար քանակով փոխարինողների:

2007 թվականին Բոլոնիայի հռչակագրով ենթադրվող շարունակական կրթության շրջանակներում քոլեջը միացել է ՃԾՀԱՀ-ին՝ փաստացիորեն դառնալով համալսարանի միավորներից մեկը:

Քոլեջի տասնյակ հազարավոր շրջանավարտների մեծ մասը կյանք է մտել շինարարի կոչումով:

ՀԱՅԱՍՏԱՆՆ ԸՆԴԳՐԿՎԵՑ ԵՎՐՈՊԱՅԻ ՔԱՐԱՆՁԱՎԱԳԵՏՆԵՐԻ ՖՈՐՈՒՄԻ ԿԱԶՄՈՒՄ

Օգոստոսի 20-27-ն Ավստրայի Էբենզի քաղաքում տեղի ունեցավ Եվրոպայի քարանձավագետների ֆորումը, որին իր մասնակցությունն ունեցավ նաև Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ԳԷԿ ամբիոնի վարիչ Սամվել Շահինյանը:

Ֆորումի շրջանակներում կազմակերպված գեղանկարչական գործերի ցուցահանդեսին Ս. Շահինյանը հանդես եկավ «Հայաստանի հարավ, հարավ-արևելյան հատվածներում կարստային քարանձավների առաջացման և զարգացման առանձնահատկությունները» թեմայով զեկույցով՝ 20 պլակատների ձևով հավաքված պաստառների հիման վրա: Զեկույցն ընդունվեց մեծ ոգևորվածությամբ, եղան նաև համատեղ գիտական արշավախումբ կազմակերպելու վերաբերյալ առաջարկներ:

Եվրոպայի Քարանձավագետների ֆորումի Գլխավոր ասամբլեայի բաց նիստի ընթացքում, ի թիվս մի շարք կարևոր հարցերի, քննարկվեց նաև Հայաստանի Քարանձավա-գիտական կենտրոնի անդամակցության հարցը Եվրոպայի քարանձավագետների ֆորումին: Գլխավոր ասամբլեայի բոլոր 9 անդամների կողմ ձայնով՝ Հայաստանը դարձավ ֆորումի լիարժեք անդամ: ՀՀ-ից պատգամավոր հաստատվեց Սամվել Շահինյանը, փոխարինող պատգամավոր՝ հնագետ, Քարի դար մեծ հայտնագործությունների հեղինակ Բ. Գասպարյանը:

Հատկանշական է, որ 2019թ-ին Հայաստանի Քարանձավագիտական կենտրոնի 35 ամյակին նվիրված գիտական կոնֆերանսին մասնակցելու ցանկություն հայտնեցին Քարանձավագետների համաշխարհային միության նախագահ Ջորջ Վենին, ինչպես նաև Քարանձավագետների ֆորումի Գլխավոր ասամբլեայի 5 անդամ:

ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՆՈՒՆԸ՝ ՀԱՅՏՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԷՋԵՐՈՒՄ

Համալսարանն իրականացնելով բազմաթիվ ծրագրեր և խրախուսումներ, խթանող ուժ է հանդիսանում մեր գիտնականների և մասնագետների համար՝ իրենց ոլորտում հաջողություններ գրանցելու և երկրի ու համալսարանի վարկանիշը բարձրացնելու համար: Մասնավորապես անհրաժեշտ է նշել «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի աշխատողների խրախուսման կարգը, որը մեծ ակտիվություն ցուցաբերեց համալսարանի գիտական կյանքում:

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանն այսօր բարձր գլխով և հպարտությամբ ներկայանալու առիթ ունի: Մեր համալսարանի ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, Կրթական ծրագրերի մշակման բաժնի գլխավոր մասնագետ և երիտասարդ մասնագետների գիտական աշխատանքների համակարգող Մանուկ Բարսեղյանը մեծ ոգևորությամբ էր ցուցադրում հանրահայտ Springer-ի կայքէջը, որտեղ զետեղված է մեր համալսարանի անունը՝ իր համահեղինակած «Physics of Quantum rings» գիտական գրքի շնորհիվ:

Մանուկ Բարսեղյանը, ստանալով հրավեր Դրեզդենի համալսարանի Նանոգիտության ինստիտուտի պրոֆեսոր Վլադիմիր Ֆոմինի կողմից՝ ձեռնամուխ եղավ Կանադայի, Չիլիի և Էկվադորի համալսարանների մասնագիտական խմբերի հետ համատեղ հեղինակել «Physics of Quantum rings»-ի 2-րդ հրատարակության երկու գլուխները: Սեպտեմբերի 2-ին լույս տեսած գիրքն արդեն հասանելի է Springer-ում օնլայն տարբերակով:

ՆԱԽ ԱՐԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ՝ ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՀՅՈՒՐ

ՀՀ Կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյանին մեր համալսարանում հետաքրքիր էր ամեն ինչ՝ սկսած գեոդեզիական նշանակության անօդաչու թռչող սարքից մինչև նորակառույց ճաշարանի շենքը:

Նախարարի այցը Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան ճանաչողական էր, կարելի է ասել, ծանոթություն՝ գրեթե մեկդարյա կրթօջախի նորօրյա գործունեության, ձեռքբերումների և նորարարությունների հետ: Նախարար Հարությունյանին մեր համալսարանում ուղեկցում էին ռեկտոր Գագիկ Գալստյանը, պրոռեկտորները, դեկանները և դասախոսներ:

Շրջելով մեր լաբորատորիաներով և արվեստանոցներով՝ նախարարն իր անկեղծ հիացմունքն արտահայտեց դրանց՝ ինչպես ժամանակակից սարքերով ու սարքավորումներով հագեցած լինելու, այնպես էլ տիրող ստեղծագործական մթնոլորտի վերաբերյալ: Հանդիպումը ջերմ էր, մտերմիկ, բայց և՝ աշխատանքային ու համագործակցության պատրաստակամությամբ: Ռեկտոր Գալստյանը նախարարին ներկայացրեց համալսարանի կրթական գործունեությունը, ներքին և արտաքին համագործակցային կապերը, ձեռքբերումներն ու հեռանկարային ծրագրերը:

ԲԱԼՏՐՈՒԾԱՅՏԻՍԻ ԱՆՎԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐԸ ՍՏԱՑԱՎ ԻՐ ՊԱՐԳԵՎԸ

Ճարտարապետության ֆակուլտետի մագիստրանտ Վարդգես Շահմենենդյանը, ով հանդես էր եկել Գյումրու պատմաճարտարապետական ժառանգությանը, դրա պահպանմանն ու վերակենդանացմանը նվիրված նախագծով, արժանացավ հավաստագրի և դրամական պարգևի:

Նշենք, որ արդեն 2-րդ անգամ անցկացվող Յուրգիս Բալտրուշայտիսի անվան մրցանակը՝ <Պատմաճարտարապետական ժառանգության պահպանում և վերականգնում> անվանակարգում, սահմանել է <Պետրոս Ալոյան>-ի անվան հիմնադրամը՝ ՀՀ-ում Լիտվայի դեսպանատան ու Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի հետ համատեղ:

Մրցանակաբաշխության արարողությանը ներկա էին ՀՀ-ում Լիտվայի արտակարգ և լիազոր դեսպանի ժամանակավոր պաշտոնակատար Նիդա Դալմանտայտեն, ՃՇՀԱՀ-ի ռեկտոր Գագիկ Գալստյանը, <Պետրոս Ալոյան>-ի անվան հիմնադրամի տնօրեն Հայկ Ալոյանը, ՀՀ Ճարտարապետների պալատի նախագահ Մկրտիչ Մինասյանը, ՀՀ Շինարարների միության տնօրեն Գուրգեն Մինասյանը, <Հորիզոն-95> և <Կամուրջշին> ընկերությունների ներկայացուցիչները, պրոռեկտորներ, դեկաններ:

Հակիրճ ամփոփելով մրցույթը՝ Հայկ Ալոյանը շեշտեց, որ անհամեմատելի բարձր է մեր համալսարանի ուսանողների ներկայացրած աշխատանքների որակն ու մակարդակը:

Բարձր գնահատելով նախկին դեսպան Էրիկաս Պետրիկասի աշխատանքն ու ջանքերը՝ մրցույթի ստեղծման գործում, Նիդա Դալմանտայտեն կարևոր համարեց պատմամշակութային ժառանգության պահպանմանն ուղղված նմանատիպ նախաձեռնության շարունակական բնույթը:

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԱՏ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ Է

Անկախությունն ապրում է յուրաքանչյուրի աչքերում. դրսևորումներն ու հայացքներն են տարբեր: Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ուսանողները, սակայն, գրեթե միշտ, նույն ուղղությամբ են նայում և տեսնում գեղեցիկը, յուրօրինակն ու ազնիվը:

Այսօր էլ՝ Հայաստանի Անկախության 27-րդ տարեդարձի նախօրեն, ևս մեկ առիթ է ցույց տալու Հայրենիքի նկատմամբ սերն ու հոգատարությունը: Մեր համալսարանի ճարտարապետներին, դիզայներներին ու շինարարներին համատեղել էր Ուսանողական խորհրդի կողմից կազմակերպված <Անկախության սերնդի աչքերով> ցուցահանդեսը: Փայլող ու հպարտ աչքեր, քաջ զինվորներ, հայկական հողում ծաղկած ծառեր, հայրենի ջուր: Մի քիչ էլ Կոմիտասյան նոտաներ ու կրկին Հայաստան ջան:

Այս բովանդակությամբ լուսանկարներն ու գեղանկարներն էին ողջունում ցուցահանդեսի հյուրերին՝ համեմված համալսարանի տաղանդաշատ երաժիշտների ջութակի և թավջութակի հնչյուններով: <Անկախությունն ազատություն և մեծ պատասխանատվություն է, մտածելու և ստեղծագործելու ազատություն>. պետք է հենց այսպես մտածես, որպեսզի ծնունդ տաս արվեստի գործերին, Հայրենիքդ գովերգող կտավին, լուսանկարին ու քանդակին:

ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԵԿԻՆՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ Է ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

Այսօր օրերին Պեկինի քաղաքացիական շինարարության և ճարտարապետության համալսարանում անցկացվում է <Ճարտարապետություն և շինարարություն- արդի հիմնախնդիրներ> խորագրով միջազգային 10-րդ, հոբելյանական գիտաժողովը:
Պեկինում է գտնվում Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի պատվիրակությունը՝ ռեկտոր Գագիկ Գալստյանի ղեկավարությամբ: Թվով 10-րդ գիտաժողովին մասնակցում են պատվիրակություններ նաև Վրաստանից, Չինաստանից, Ռուսաստանից, Լեհաստանից, Միացյալ Նահանգներից, Ուկրաինայից, Հունաստանից, Չեխիայից, Իտալիայից: Մեր պատվիրակության ներկայացուցիչները գիտաժողովին ներկայանում են 40 գիտական հոդվածներով:



Նշենք, որ <Ճարտարապետություն և շինարարություն- արդի հիմնախնդիրներ> խորագրով միջազգային նախորդ՝ 9-րդ գիտաժողովն անցկացվել է Շոթա Ռուսթավելու անվան Բաթումիի պետական համալսարանում, իսկ 8-րդը՝ Երևանում՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի 95 ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում: Ինչպես ուրախությամբ տեղեկացանք Պեկինից, որոշվել է, որ հաջորդ՝ 11-րդ գիտաժողովը նույնպես անցկացվելու է Երևանում: Արդեն 10-րդ անգամ անցկացվող գիտաժողովի կազմակերպիչներն են Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը, Պեկինի քաղաքացիական շինարարության և ճարտարապետության համալսարանը, Չեստոհովայի տեխնոլոգիական համալսարանը, Սանկտ-Պետերբուրգի ճարտարապետաշինարարական պետական համալսարանը, Օստրավայի տեխնիկական համալսարանը, Չեխիայի համալսարանը, Ֆլորենցիայի համալսարանը:

ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ՝ ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՈՒ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ

Սեպտեմբերի 17-22-ն Իտալիայի Ուդինե քաղաքում մեր համալսարանի Ճարտարապետություն, Շինարարության և Դիզայն ֆակուլտետների 9 ուսանողներ՝ դասախոս Գառնիկ Ստեփանյանի ղեկավարությամբ, մասնակցել են <Bacco's Designing the wine project> խորագրով ամառային դպրոցին: Ամառային դպրոցի շրջանակներում՝ Իտալիայի, Հայաստանի, Արգենտինայի, Իսպանիայի, Մեքսիկայի, Հոնդուրասի մասնակից ուսանողներն արդեն հասցրել էին այցելել Իտալիայում գտնվող մի շարք գինու գործարաններ, ծանոթացել առկա խնդիրներին, լսել դրանց լուծման վերաբերյալ գործարանների ղեկավարների ցանկությունները և առաջարկությունները, ինչից հետո առաջարկել իրենց ճարտարապետական ու դիզայներական լուծումները:

Հայրենիք ու համալսարան վերադարձած Մերի Չալիկյանը, Էրիկ Վարդանյանը, Սերգեյ Պետրոսյանը, Սիրանուշ Ղազարյանը, Լիանա Մանասարյանը, Անի Ամարյանը, Սվետլանա Նազարանը, Մերի Պողոսյանը և Անուշ Օհանյանը պատմեցին Ուդինեից ստացած իրենց տպավորություններիի մասին: Սակայն, ինչպես ոգևորությունից փայլող ուսանողները նշեցին, իրենց տեսածն ու լսածը բառերով նկարագրելը գրեթե անհնար է: Էքսկուրսիաներ և

պրակտիկաներ բացառիկ վայրերում, ձեռք բերած անկշռելի գիտելիքներ, փոխանակված մտքեր, հաղթահարված լեզվական խնդիրներ, համտեսած եզակի գինիներ և անհավանական հաջողություններ: Իտալական Ուդինեից ստացած տպավորությունների մասին այսպիսի փոքրիկ, բայց բովանդակային խճանկար էին պատրաստել մեր տաղանդաշատ ուսանողները:

Նրանք այնքան տպավորված և հպարտ էին, որ խնդրեցին անհամեստաբար, բայց անպայման նշել Մերի Չալիկյանի և արգենտինական համալսարանի Ճարտարապետության ֆակուլտետի դեկանի հետ ունեցած էքսպրոմտ նկարչական մրցույթի մասին: Երիտասարդ միտքը միշտ է հաղթում՝ մեր ուսանողուհին ապացուցեց այն նաև հեռավոր Իտալիայում: Այստեղ չեն մոռացել նաև հայոց լեզվի և հայկական մշակույթի մասին: Հոնդուրասի մասնակիցը մինչև ամառային դպրոցի ավարտն արդեն հասցրել է սերտել ձ-ծ-ց ուղղագրությունը և անձամբ բոլորին պատմել Հայաստան աշխարհի մասին:

Հավաստագրերով վերադարձած ուսանողները նշեցին նաև, որ մեր համալսարանի պատվիրակությունը ցուցաբերել է բարձր մասնագիտական որակներ և պատվով ներկայացրել մեր երկիրն ու համալսարանը:

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ՝ ՃՇՀԱՀ-Ի ՈՒՍԽ ՈՐՀՐԴԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀ

Հոկտեմբերի 1-ին տեղի ունեցավ ՃՇՀԱՀ-ի Ուսանողական խորհրդի ընդլայնված նիստը: Նիստը նախագահում էր Ուսանողական խորհրդի նախագահ Հովսեփ Հովեյանը: Ընդլայնված ժողովը բաղկացած էր բոլոր ֆակուլտետների 32 պատվիրակներից:

Նիստի օրակարգային հարցերն էին՝

1. ՃՇՀԱՀ Ուսանողական խորհրդի կանոնադրությունում փոփոխությունների և լրացումների հաստատում, (զեկուցող՝ Հ. Ա. Հովեյան),
2. ՃՇՀԱՀ Ուսանողական խորհրդի նախագահի ընտրություն
3. Ընթացիկ հարցեր

Հ. Հովեյանը ներկայացրեց նախագահի թեկնածու Արմեն Հարությունյանի անձնական գործը և հայտնեց, որ Ուսանողական խորհրդի նախագահի թեկնածուներից միայն նա է կարողացել ներկայացնել պահանջվող լիարժեք փաստաթղթերը:

Արմենը 2013 թ-ից հանդիսանում է Ուսանողական խորհրդի անդամ, այժմ ասպիրանտ է, միջին որակավորման գնահատականը 20 միավորանոց սանդղակով 19,56 է, իրականացրել է 5 խոշոր ուսանողական ծրագրեր:

Բաց, թափանցիկ քվեարկությամբ՝ Ա. Հարությունյանը միաձայն ընտրվեց Ուսանողական խորհրդի նախագահի պաշտոնում:

ՎԵՐԱԴԱՐՁԱՆՔ ԱՆՆԱԽԱԴԵՊ ՀԱՂԹԱՆԱԿՈՎ

Մեր համալսարանի ուսանողները, գրեթե, միշտ միջազգային մրցույթներից վերադառնում են դիպլոմներով և մրցանակներով ծանրաբեռնված: Սեպտեմբերի 23-29-ը Վոլգոգրադում կայացած ԱՊՀ երկրների Ճարտարապետական բարձրագույն դպրոցների ավարտական աշխատանքների միջազգային 27-րդ ստուգատեսը ևս բացառություն չէր:

Ստուգատեսին մասնակցում էր 55 բարձրագույն ուսումնական հաստատություն՝ ավելի քան 600 աշխատանքներով: Ներկայացված 35 աշխատանքից՝ 28-ն արժանացել է 1-ին կարգի դիպլոմների և լրացուցիչ պատվոգրերի:

Հաղթանակած մագիստրանտներին և բակալավրներին հանդիսավոր կերպով հանձնվեցին դիպլոմները: Ներկաները հպարտությամբ փաստեցին, որ մասնակից բուհերի շարքերում Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը լավագույն հնգյակում է, իսկ մեր ուսանողները՝ ամենավարկանիշայինը:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԾԱՆՈԹԱՑԱՆ ԿՅԱՆՔԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ՃՇՀԱՀ Կարիերայի կենտրոնի, «ԱՅ ԷՅ Բի» բիզնեսի միջազգային ակադեմիայի և «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա» ընկերությունների համագործակցության արդյունքում՝ հոկտեմբերի 6-ին, «Երիտասարդների Զարգացում» եռամյա ծրագրի շրջանակներում անցկացվեց «Կյանքի հմտություններ» մոդուլը:

Ծրագրի նպատակն է՝ Հայաստանում աջակցել 18-30 տարեկան երիտասարդներին, որպեսզի նրանք ծանոթանան կյանքի՝ մասնագիտական, հաղորդակցման, թիրախավորված աշխատանք փնտրելու, գտնելու և դիմելու հմտություններին:

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում ծրագրին մասնակցեց շուրջ 130 երիտասարդ, ովքեր հնարավորություն ստացան խմբային աշխատանքների միջոցով շփվել գործատուների հետ, և տեղում ստանալ անհրաժեշտ խորհրդատվություն:

Համագործակցության շրջանակներում՝ ծրագիրը կունենա շարունակական բնույթ, կանցկացվի նաև «Բիզնես հմտություններ» մոդուլը:

ԵՐԵՎԱՆԸ ԽՈՍՈՒՄ, ԾՆՉՈՒՄ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ Է ՖՐԱՆՍԵՐԵՆ

Հոկտեմբերի 7-ից, Երևանում մեկնարկել են Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության (ՖՄԿ) 17-րդ գագաթնաժողովի շրջանակներում նախատեսված միջոցառումները: Բացի քաղաքական օրակարգից՝ այն նաև հագեցած է մշակութային, տնտեսական և մի շարք հարակից միջոցառումներով: Նշենք, որ որպես Ֆրանկոֆոնիայի 17-րդ երևանյան գագաթաժողովի լոգո՝ ընտրվել է նուռը՝ ի նշան ֆրանկոֆոն ողջ տարածքի խաղաղության և բարգավաճման:

Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի շրջանակներում՝ Երևանի կենտրոնում բացվել էր «Ֆրանկոֆոնիայի ավան», որտեղ տաղավարների մեջ իրենց կենցաղն ու մշակույթն էին ներկայացնում մասնակից երկրները:

«Ֆրանկոֆոնիայի ավան»-ում էր հյուրընկալվել նաև Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտոր Գագիկ Գալստյանը, Ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման, վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնի վարիչի ժ/պ, դոցենտ Էմմա Հարությունյանը: Ռեկտոր Գալստյանը երևանյան այս մեկ շաբաթը խիստ

կարևոր, գեղեցիկ և հիշարժան համարեց՝ տարբեր մշակույթները մեկտեղելու և ֆրանսախոս երկրների միջև համերաշխություն, մեր երկրի արևի ջերմությունը սերմանելու առումով:

Ֆրանս-հայկական համալսարանական համագործակցության համատեքստում՝ Էմմա Հարությունյանն իր ելույթում շեշտադրեց Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի և ֆրանսիական համալսարանների միջև ակտիվ ու բազմակողմանի համագործակցությունը: Խոսելով Էկո-ճարտարապետության մասին՝ տիկին Հարությունյանը նշեց, որ այդ թեմայով զարգացումները կապված են մեր համալսարանի և Լիոնի Ճարտարապետական ազգային դպրոցի միջև՝ 2007թ-ին սկիզբ առած համագործակցության հետ: Շարունակելով Էկո-ճարտարապետության թեման՝ տիկին Հարությունյանը մատնանշեց 2015թ-ին Երևանում կազմակերպված <Հողաշեն ազգային ժառանգություն. Հողը՝ որպես նյութ հայկական տարածաշրջանների զարգացման համար> թեմայով միջազգային՝ հայ-ֆրանսիական-իտալական գիտաժողովն ու ցուցահանդեսը՝ առանձնահատուկ շնորհակալություն հայտնելով մեր համալսարանի և Լիոնի Ճարտարապետական ազգային դպրոցի համագործակցության ակունքում կանգնած նույն դպրոցի դասախոս, ճարտարապետ և մեր հայրենակից Սյուզան Մոննոյին:

Ներկայացվեցին հայ-ֆրանսիական համալսարանական համագործակցության արդյունքում իրականացված մյուս բոլոր ծրագրերը, դասախոսների և ուսանողների փոխադարձ այցերը և համատեղ նախագծերը:

ՌԱՏԳԵՐՍՅԱՆ ԴԱՍԱԽ ՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՍՏԱՑԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ

ՃԾՀԱՀ-ի, <Հայ օգնության ֆոնդ>-ի և <Ամերիկահայ ճարտարագետների և գիտնականների ընկերակցության> համագործակցության շրջանակներում, Նյու Ջերսիի Ռատգերսի պետական համալսարանի պրոֆեսորների կողմից մեր համալսարանում դասախոսությունների անցկացումն արդեն ավանդական բնույթ է կրում:

Ռատգերսի պետական համալսարանի պատվիրակությունը հերթական անգամ ժամանեց մեր համալսարան: Դասախոսություններով հագեցած օրակարգը, սակայն, չխանգարեց պրոֆեսորներին ներկա լինել և մասնակցել մայիս-հունիս ամիսներին դասախոսություններին մասնակցած ուսանողներին պարգևատրելու արարողությանը:

Դասախոսների, պրոռեկտորների, ուսանողների և ռեկտոր Գագիկ Գալստյանի անմիջական մասնակցությամբ՝ պրոֆեսոր Ալի Մահերը հանձնեց այն 23 ուսանողների հավաստագրերը, ովքեր դասընթացներին ապահովել էին 70 տոկոս մասնակցություն և ներկայացրել իրենց նախագծերը:

ՄԵՐ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՑՈՒ ՓՈՐՁԸ՝ ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՏԱՂԱՎԱՐՈՒՄ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանն ակտիվ համագործակցում է աշխարհի մի շարք երկրների, այդ թվում՝ ֆրանսիական համալսարանների հետ: Վերջիններիս հետ համագործակցությունն առավել բազմակողմանի և ակտիվ բնույթ է կրում:

Տասնյակ տարիների համագործակցության հենքի վրա ՃԾՀԱՀ-ի և Լիոնի ճարտարապետական համալսարանների միջև ձևավորված համագործակցությանը միացավ նաև միջազգային ճանաչում ունեցող CRAterre ֆրանսիական լաբորատորիան: Այս եռակողմանի համագործակցության շրջանակում՝ Հայաստանում անցկացվող ֆրանկոֆոնիայի գագաթաժողովի օրերին, Լիոնի ճարտարապետական համալսարանի շրջանավարտ և CRAterre լաբորատորիայի կողմից վստահված Հյուգո Դագուիլոն ներկայացրեց փորձեր «Հողը՝ որպես շինարարական նյութ» խորագրով: Հյուգո Դագուիլոնի հետ համատեղ աշխատեցին ՃԾՀԱՀ-ի ՃՏՊՃԺՎԳԱ և Պ ամբիոնի ասպիրանտներ Լիլիթ Բաբայանը և Էվլին Օրդուխանյանը, ովքեր պատրաստեցին և ներկայացրեցին թեման լուսաբանող շնորհանդեսներ, անցան վերապատրաստման դասընթացներ: Ֆրանկոֆոնիայի տաղավարում փորձերի ընթացքն ուղեկցվեց անմիջական մասնակիցների և դիտորդների բուռն ակտիվությամբ՝ ընդգրկելով հետաքրքրվողների տարիքային լայն միջակայք:

ՄԵՐ ԴԱՐԵ ԿԱՐՈՏՆ ՈՒ ՔԱՐԵ ՆԱՉԱՆՔԸ 2800 ՏԱՐԵԿԱՆ Է

Մայրաքաղաքում տոնական եռուզեռ է: Երևանի ծննդյան տոնին բոլորն են հրավիրված, բոլորն էլ ուզում են ժամանակին լինել Երևանի սրտում, մասնակիցը դառնալ մշակութային միջոցառումներին և նվիրել իրենց լայն ժպիտները:

2800 տարիների ընթացքում բազմիցս փոխեցիր դիմագծերդ ու գույներդ, բայց շարունակեցիր ապրել նույն վարդագույն հոգով, շարունակեցիր յուրաքանչյուր բնակչիդ նվիրել հիշողություններ և դառնալ բոլորի սիրո ու սրտի մայրաքաղաքը:

Շնորհավոր ծնունդդ Երևան:

ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԵՐԱՉԱՆՔՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՐԱԾ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԿԻՍՎՈՒՄ Է ԻՐ ՓՈՐՁՈՎ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի դռները միշտ բաց են արտերկրից ժամանած լավագույն մասնագետների, հատկապես, մեր հայրենակիցների առջև:

Հոկտեմբերի 25-ին հետաքրքիր և ճանաչողական օր էր Ճարտարապետության ֆակուլտետի ուսանողների համար: Երկօրյա դասախոսությունների էր ժամանել հայազգի ճարտարապետ Սամիր Դաուդը, որը հեղինակել է Դուբայի բազմաթիվ հայտնի ժամանակակից շինություններ: Առաջին օրվա դասախոսության թեման «Ժամանակակից քաղաքների ձևավորում»-ն էր, որի ընթացքում Ս. Դաուդն ուսանողներին պատմեց մանկության հիշողությունների, ճարտարապետության վերաբերյալ իր ուրույն պատկերացումների մասին:

ՔԱՆԴԱԿԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ ՆԵՐԿԱՅԱՑԱՆՔ ՆՈՐ ԵՎ ՏՊԱՎՈՐԻՉ ԱՍԵԼԻՔՈՎ

Նոյեմբերի 2-ին՝ Գորիսի Ակսել Բակունցի տուն-թանգարանում, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ուսանողները, երիտասարդ արվեստագետները մասնակցեցին «Ժամանակակից քանդակի ցուզահանդես»-ին՝ դասախոս, քանդակագործ Հայկ Թոքմաջյանի ղեկավարությամբ:

Ներկայացված էին մոտ 25 աշխատանք: Տարբեր նյութերով, անհատական, ուրույն կերպարայնությամբ և ժամանակակից ու նոր խոսքով լի քանդակները ջերմ ընդունելության արժանացան ներկա հյուրերի կողմից:

ՏՐՎԵՑԻՆ ՄԵՏՐՈՅԻՑ ԱՆՎՃԱՐ ՕԳՏՎԵԼՈՒ ՔԱՐՏԵՐԸ

Ուսանողական խորհրդի հերթական նիստի ընթացքում՝ Ուսանողական խորհրդի նախագահ Արմեն Հարությունյանի կողմից տրվեցին «Սոցիալապես անապահով և հասարակայնապես ակտիվ ուսանողների՝ մետրոյից անվճար երթևեկելու» քարտերը՝ ապահովելով ծրագրի շարունակական ընթացքը: Մշտապես լինելով ուսանողների կողքին, կիսելով նրանց մտահոգություններն ու լուծման ուղիներ փնտրելով՝ Ուսանողական խորհուրդը 2013թ-ին ձեռնամուխ եղավ մի նախաձեռնության, որը միտված էր թեթևացնել սոցիալապես անապահով ուսանողների ֆինանսական խնդիրները և խրախուսել համալսարանական ակտիվ կյանքով ապրող ու գերազանց առաջադիմություն ցուցաբերող ուսանողներին:

Հիշեցնենք, որ Ուսանողական խորհրդի այս ծրագիրը 2015 թ-ին Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից կազմակերպվող «Հայկյան» մրցանակաբաշխությանը հաղթող է ճանաչվել «Լավագույն ինքնատիպ նախագիծ» անվանակարգում:

ՃՇՀԱՀ ՎՈԼԵՅԲՈԼԻ ՏՂԱՆԵՐԻ ԹԻՄԸ ՀՀ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՄԲԻ 3-ՐԴ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

Սույն թվականի նոյեմբերի 1-ին ավարտվեց ՀՀ 2018 թ. տղամարդկանց բարձրագույն խմբի առաջնությունը: Մեր համալսարանի վոլեյբոլի տղաների թիմը դարձավ 3-րդ մրցանակակիր: Առաջնության «Լավագույն խաղացող» մրցանակի արժանացավ մեր համալսարանի կառավարման ֆակուլտետի ուսանող, ՀՀ վոլեյբոլի հավաքականի անդամ և մեր թիմի առաջատար Անդրէ Սիմոնին:

Շնորհավորում ենք մեր վոլեյբոլի թիմին և մեր բուհին այս հաջողության կապակցությամբ՝ ցանկանալով նորանոր բարձունքներ:

ՀԱՏՈՒԿ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՕՐԵՐԻՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ

Նոյեմբերի 13-ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտոր Գագիկ Գալստյանը հանդիպեց ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության՝ 2018թ-ի հոկտեմբերին Երևանում անցկացված 17-րդ գագաթնաժողովի աշխատանքներին մասնակցած ուսանողների և աշխատակիցների հետ:

800 կամավորների շարքում ներգրավված էին նաև Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Միջազգային կապերի վարչության արտասահմանցի սովորողների բաժնի վարիչ Տ. Հակոբյանը, ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության Ակադեմիական նվաճումների կենտրոնի պատասխանատու-համակարգող Զ. Թորոսյանը և 16 ուսանող (Ճարտարապետության ֆակուլտետ – 10 ուսանող, Քաղաքային տնտեսության և էկոլոգիայի ֆակուլտետ – 2 ուսանող, Դիզայնի ֆակուլտետ – 2 ուսանող, Կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետի – 1 ուսանող և Շինարարության ֆակուլտետի 2018թ. բակալավրիատի 1 շրջանավարտ):

Ռեկտոր Գալստյանը շնորհակալություն հայտնեց մասնակիցներին՝ ՖՄԿ 17-րդ գագաթնաժողովի անցկացման ընթացքում աշխատանքների պատշաճ իրականացման, դրսևորած բարձր պատասխանատվության և համալսարանը արժանապատիվ ներկայացնելու համար և շնորհավորեց ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանի կողմից շնորհակալագրերով պարգևատրվելու կապակցությամբ:

«ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ» ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑ

Նոյեմբերի 15-ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում ամփոփվեց «Ճարտարապետ Արամ Խաչատրյան» մրցանակաբաշխությունը, որն արդեն 2-րդ տարին անընդմեջ կազմակերպում է «Ճարտարապետ Արամ Խաչատրյան» հիմնադրամը:

Արդեն ավանդաբար՝ հիմնադրամն ընտրում է մրցանակակրին՝ հաշվի առնելով ուսանելու տարիներին նրա առաջադիմությունը, մարդկային որակները, իրականացրած ճարտարապետական նախագծերի քանակը:

Այս տարի՝ հարցազրույցներից, մասնակիցների՝ հոգեբանական ու մարդկային տեսակը բացահայտող թեստերից հետո հաղթող է ճանաչվել ասպիրանտ Արամ Ավետիսյանը՝

արժանանալով 1 միլիոն դրամ պարգևի: Մրցանակի հանձնման արարողությանը ներկա էին ճարտարապետ Արամ Խաչատրյանի ընտանիքի անդամները, ՃԾՀԱՀ-ի դասախոսներ և ուսանողներ:

ՕԳՆՈՒՄ ԵՆՔ՝ ՃԱՆԱՉԵԼ ՀԱՅԿԱԿԱՆԸ

Հայկականը միշտ նորաձև է, միշտ գեղեցիկ ու մշտական ոգեշնչման առարկա: Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Ուսանողական խորհրդի մշակութային հանձնաժողովն դեկտեմբերի 4-ին կազմակերպել էր ցուցահանդես-վաճառք՝ նվիրված Երևանի 2800 ամյակին:

«Ճանաչիր հայկականը» խորագիրը պատահական չէր: Հայեցի էր ամեն ինչ՝ գույները, գծերը, զարդերն ու զարդանախշերը: Եվ այս ամենը, իհարկե, համեմված ազգային երգ ու պարով:

Ցուցահանդեսին ներկա էին ՃԾՀԱՀ-ի ռեկտոր Գագիկ Գալստյանը, դասախոսներ և ուսանողներ: Ռեկտոր Գալստյանը կազմակերպիչներին ու մասնակիցներին շնորհավորեց

ցուցահանդեսի բացման առթիվ, և հորդորեց ապահովել հայկականը խթանող նմանատիպ նախաձեռնության շարունակականությունը:

Ի դեպ՝ ցուցահանդես-վաճառքից գոյացած գումարը կնվիրաբերվի մանկատներին:

ԿԱՅԱՑԱՎ ՀՀ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ 4-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Դեկտեմբերի 5-ին տեղի ունեցավ ՀՀ Շինարարների միության 4-րդ համագումարը:

Համագումարին ներկա էին ՀՀ փոխվարչապետի պաշտոնակատար Տիգրան Ավինյանը, Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Ավետիք Էլոյանը, Ռուսաստանի և Բելառուսի Շինարարների միության նախագահները, ՀՀ Շինարարների միության նախագահ, ՃՇՀԱՀ-ի ռեկտորԳագիկ Գալստյանը, *ՀՀ Ճարտարապետների պալատինախագահ Մկրտիչ Մինասյանը, փոխնախարարներ, դեսպանատան ներկայացուցիչներ, շինարարներ:*

«Շինարարության ոլորտը մշտապես գտնվում է պետության ուշադրության կենտրոնում»՝ ողջունելով համագումարի մասնակիցներին նշեց փոխվարչապետի պաշտոնակատար Տիգրան Ավինյանը: Նա նկատեց, որ վերջին տարիների անկումային ցուցանիշներից հետո ոլորտը կայունացել և ոտքի է կանգնում: Շինարարության ընդհանուր ծավալները 2018 թ-ի առաջին 10 ամսվա արդյունքներով աճել են 6,5 տոկոսով, այդ թվում՝

25 տոկոսով աճել են պետական բյուջետային ֆինանսավորմամբ իրականացվող շինարարության ծավալները:

«30 տարի առաջ, երբ լսեցի երկրաշարժի գույժը, մտքովս էլ չէր անցնում, որ երեք տասնյակ տարի հետո ղեկավարելու եմ մի ոլորտ, որն աղետի հետևանքները վերացնելու պատասխանատուն է լինելու»,- իր խոսքը սկսեց Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Ավետիք Էլոյանը՝ հորդորելով յուրաքանչյուրին գիտակցել, թե ինչ հետք է թողնելու իր գործունեությունը Հայրենիքի շենացման գործում. «Քաղաքաշինությունն ու ճարտարապետությունը պետք է դիտարկել մեկ ընդհանուր համատեքստում: Երկիրը պետք է ունենա պետական պլանավորում, ամեն մի թիզ հողը պետք է կառուցապատվի այս տրամաբանությամբ»:

Ներկայացնելով շինարարի՝ անձնվեր և կարևորագույն առաքելությունը, Հայաստանի շինարարների միության նախագահ, ՃՇՀԱՀ-ի ռեկտոր Գագիկ Գալստյանը խոսեց շինարարությանն ու քաղաքաշինությանն առնչվող գործառույթները մեկ լիազոր մարմնում կենտրոնացնելու անհրաժեշտության, քաղաքաշինության ոլորտում պետական փորձաքննական կառույցի ստեղծման, մասնագիտական կադրերի, կրթության որակի բարելավման և շինարարներին հուզող այլ հարցերի մասին:

Գ. Գալստյանը նշեց, որ Շինարարների միությունը մշտապես մասնակցել է օրենսդրական դաշտում տեղի ունեցող փոփոխություններին, քննարկումներին, հանդես եկել դաշտը բարելավելուն ուղղված հիմնավոր առաջարկներով.

Միությունն ընդգրկված է բազմաթիվ պետական, կառավարական, միջգերատեսչական հանձնաժողովներում և խորհուրդներում, այդ թվում՝ Հանրային խորհրդի հանձնաժողովներում, «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման» ազգային խորհուրդներում, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և ՀՀ Գույքի կառավարման վարչության կոլեգիաների կազմում և լիցենզավորման հանձնաժողովներում, ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդում և այլն: Շինարարների միությունը քայլում է Հայաստանի ճարտարապետների միության և ոլորտի մայր բուհի հետ միասին: Նրանց միջև դեռևս 2006 թ. կնքված եռակողմ հուշագրով համագործակցությունը գործնականորեն դարձել է ավելի բազմակողմանի և արդյունավետ: Բոլոր ձեռքբերումներն ու հաջողությունները միասնական աշխատանքի արդյունք են: Եռակողմ են եղել մեր բոլոր քննարկումները՝ պետական թե հասարակական միջավայրում: Համատեղ իրականացվել են օրենսդրական և իրավական ակտերի մշակումներ, մասնագիտական, կրթական բարեփոխումների ծրագրեր:
Համագումարի ընթացքում ներկայացվեց ՀՀ Շինարարների միության նոր կանոնադրությունը, ընտրվեց խորհրդի և վերահսկիչ հանձնաժողովի նոր կազմեր:
Գագիկ Գալստյանը միաձայն վերընտրվեց ՀՀ Շինարարների միության նախագահի պաշտոնում:

ԱՆՊԱՅՄԱՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ԵՆ, ՍԻՐԱՀԱՐՎԱԾ ԵՆ. ԱՆԿԵՂԾԱՆՈՒՄ ԵՆ ՖՐԱՆՍԻԱՑԻՆԵՐԸ

Վերջին անգամ մեր երկրում էին անցյալ տարի: Այդ ժամանակ Հայաստանը չէին ճանաչում: Այստեղ էին դասախոս Սյուզան Մոնոյի հետ՝ դիպլոմային աշխատանքն ավարտելու համար:

Լիոնի ճարտարապետական համալսարանի շրջանավարտներ Հյուգո Դագիյոն և Թոմաս Թրոնվին այս տարի հոկտեմբերին Հայաստան ժամանելու այլ պատճառներ ունեին: Նախ՝ Երևանի 2800 ամյակին նվիրված միջոցառումները, ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովը և, վերջապես, երկրաշարժի 30 ամյակը: Վերջին հանգամանքն ամենահիմնավորն էր, քանի որ Գյումրին էր, ի սկզբանե, ֆրանսիացի ուսանողներին և Հայաստանին կապող օղակը:

«Այսօր մենք սիրահարված ենք Հայաստանին, նրա պատմաճարտարապետական ժառանգությանը, հայերի ակտիվությանն և կենսախինդությանը»՝ անկեղծանում են Հյուգոն ու Թոմասը: Անցյալ տարի՝ դիպլոմային աշխատանքի համար Գյումրիում բովանդակալի ու ջերմ օրեր անցկացնելուց հետո, արդեն շատ հայ ծանոթներ ունեն: Ուզում են նաև նորերն ունենալ, որպեսզի Հայաստան վերստին վերադառնալու շարժառիթներն ավելանան:

Այս տարի ՃԾՀԱՀ-ի և Լիոնի ճարտարապետական համալսարանների միջև ձևավորված համագործակցությանը միացավ նաև միջազգային ճանաչում ունեցող CRAterre ֆրանսիական լաբորատորիան: Այս եռակողմանի համագործակցության շրջանակում՝ Հայաստանում անցկացվող ֆրանկոֆոնիայի գագաթաժողովի օրերին, Հյուգո Դագիյոն, ով նաև CRAterre լաբորատորիայի կողմից վստահված անձն էր, ներկայացրեց փորձեր «Հողը՝ որպես շինարարական նյութ» խորագրով: Հողաշեն կառույցներն, ըստ նրա, կենսական անհրաժեշտություն են Գյումրու համար, և այս թեմայով ցուցահանդես բացեց նաև այնտեղ՝ աղետի գոտում:

«Հայաստանացված» և, ինչու ոչ, Հայաստանում ապրելու և ներդրումներ անելու մտադրությամբ ֆրանսիացիները Գյումրին վերականգնելու իրենց մոտեցումն ունեն: Միայն քաղաքաշինական նորմերին հետևելով շենքեր կառուցելը բավարար չէ: Կարևոր է սերտ համագործակցության մեջ մտնել բնակիչների հետ: Նրանք վստահ են՝ Գյումրիում գլխավոր հերոսը բնակիչն է, ուստի նրա հետ դիալոգի մեջ մտնելը, նրա պահանջներն ու ցանկությունները լսելը պարտադիր է:

«Իսկ հայ կանանց մասին ի՞նչ կասեք» հարցին՝ Հյուգոն ու Թոմասն ջերմ ժպտացին. «Հայ կինն էլ է նման պատմական ժառանգության»: Դե, ֆրանսիացիները շատ կնամեծար են:

ՄԻԾՏ ՈՂՋ՝ «ՈՂՋՈ՛ՒՅՆ, ԱԴԱ՛Մ»

Կար-չկար՝ մի փոքրիկ Ադամ կար: Այս փոքրիկն անընդհատ հարցնում էր մորը, թե ով է հերոս Ադամ Սահակյանը, ում մասին անընդհատ խոսում են: Մայրը խոստանում է փոքրիկին տանել Ադամ Սահակյանի տուն… Եվ, տուն մտնելուց, Ադամ Սահակյանի լուսանկարը տեսնելուց հետո, փոքրիկի առաջին արձագանքը լինում է՝ «Ողջո՛ւյն, Ադամ»:

Այս մտացածին դրվագից էլ ծնվում է Սամվել Բիշարյանի «Hello, Adam!» /«Ողջո՛ւյն, Ադա՛մ»/ գիրքը: Գեղարվեստական լուծումներով և դառը, բայց հպարտ իրականությունն արտացոլող պատմվածքների շարանում Ապրիլյան պատերազմի հերոս Ադամ Սահակյանի մինչպատերազմյան կյանքն է, հետո՝ նրան ուղղված մեծարանքի խոսքերն՝ արդեն որպես հերոս:

Հեղինակը պատմում է, որ Քառօրյա պատերազմից հետո, Ադամի ժպիտը մեխվել էր գիտակցության մեջ. Ադամին նվիրված՝ իրար հաջորդող բանաստեղծությունները չէին փոխանցում այն երախտիքն ու հպարտությունը, որը կար: Պետք է ստեղծվեր այնպիսի գործ, որը սերունդներին կծանոթացներ հերոսի սխրանքի հետ և հայրենասիրություն կսերմաներ:

Գրքի շնորհանդեսին ներկա Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Դիզայնի ֆակուլտետի փոխդեկան Թամարա Սարգսյանը մեծ սիրով ու գորովանքով հիշեց իր խելացի և շնորհալի ուսանողին՝ անձամբ շնորհակալ լինելով Ադամի ծնողներից:

«Hello, Adam!» գիրքն անգլալեզու է՝ միջին տարիքի դպրոցականների շրջանում անգլերենի գիտելիքները զարգացնելու և ավելի լայնամասշտաբ ընթերցող գրավելու համար:

ԻՍԿ ԴՈՒՔ ՃԱՆԱՉՈ՞ՒՄ ԵՔ ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԻԿՆԻԿԱԳՈՐԾԻՆ

Մի պահ պատկերացրեք՝ Քաջ Նազարը, Դոն Կիխոտը և արքայադուստրը միասին: Չե՞ք հավատում: Ուրեմն՝ դեռ չեք տեսել մեր համալսարանի Որակի ապահովման կենտրոնի գլխավոր մասնագետ Իրինա Վանյանի պատրաստած տիկնիկները:

Իր նախասիրության մասին պատմել Իրինա Վանյանը չէր ուզում: Մի փոքր երկմտում էր՝ դասախոս է, արդյո՞ք անհարմար չէ: Բայց, կարճ զրույցից հետո, սիրելի թեման ամբողջությամբ կլանեց և տեղափոխեց իր ստեղծագործական աշխարհը՝ տիկնիկների մոլորակը:

Ձեռագործ տիկնիկների նկատմամբ սերը ձևավորվել է դեռ մանկուց: Հիշում է՝ «մայրիկիս զգեստն էի կտրում, որպեսզի ծեփոնե տիկնիկիս համար հագուստ կարեի»: Այդպես, տարիների ընթացքում, նախասիրությունը վերածվեց գործունեության: Հետո, հեքիաթների՝ իրար հաջորդող կերպարներ, կողք-կողքի համերաշխ ապրող տարբեր ազգերի ներկայացուցիչներ, փոքրերին ուրախացնող փափլիկ կարմրաթուշիկներ, ցուցահանդեսներ:

Այս հեքիաթային եռուզեռի մեջ մի կարևոր սկզբունք կա, որն իմ տիկնիկագործ հերոսը երբեք չի խախտում: Ասում է՝ եթե ուզում ես տիկնիկը հաջողություն բերի, պետք է այն նվիրես: Նվիրում է բոլոր նրանց, ովքեր հիանում են, ովքեր հոգով դեռ փոքր են, ում համար ինտերիերային տիկնիկները արվեստի նմուշ են:

Տիկնիկները տարբեր թեմատիկայով են, ամենատարբեր ցուցահանդեսների համար՝ հին հայկականից միչև արծաթե դարաշրջանի նորաձևություն: Կենդանացրել է նաև Բոմարշեի «Ֆիգարոյի ամուսնությունը» կատակերգության հերոսներին:

Իրինա Վանյանի ձեռքերում տիկնիկների է վերածվում ցանկացած նյութ, լինի դա կավ, կտոր, թել, թուղթ և, նույնիսկ թափոն:

Այս պահին իսպանական հերոսներին մարմնավորած տիկնիկները ճամփա են ընկել դեպի Վալնեսիա՝ հայ-իսպանական բարեկամության կենտրոնում իրենց «ցուցադրելու»:

Իսկ Երևան քաղաքի պատմության թանգարանում բոլոր տիկնիկասերները, մինչև մարտի 5-ը, կարող են հիանալ ամանորյա կախարդական գիշերվա հանդերձանքով «Ձմեռային հեքիաթ» ցուցահանդեսի տիկնիկներով:

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան